

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի

թիվ 371-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ

Սրբոյր Ջավադյան
2011 թվականի դեկտեմբերի 22

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի՝ 2011 թվականի դեկտեմբերի 30-ի

թիվ 1117 -Ն հրամանով

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար՝

Վաչե Գաբրիելյան
2011 թվականի դեկտեմբերի 30

ԴԻՎԻԴԱ ԷՅ ԷՄ
ՓԼԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)

Էջովի էջ էմ ՓԲԸ
<< ք.Երևան, Վ.Սարգսյան 26/1, Էրեբունի Պալատ, 609 սենյակ

1. Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ՝

1) ներկայացնում են ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու հիմունքները, ինչպես նաև ընտրված և էական գործունեությունների ու իրադարձությունների նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվություն:

2) բացահայտում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (այսուհետ նաև՝ ՖՀՀՄ) պահանջվող տեղեկատվությունը, ինչը ներկայացված չէ ֆինանսական հաշվետվությունների ձևերում:

2. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ինչպես թվային, այնպես էլ պատմողական և նկարագրական տեղեկատվության ձևով բացահայտվում է հաշվետու և նախորդ ժամանակաշրջանի համադրելի տեղեկատվությունը:

3. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները ներառում են սույն հավելվածի 4-ից 51-րդ կետերով նախատեսված ծանոթագրությունները:

4. «Ծանոթագրություն 1. Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում» ծանոթագրությունում բացահայտվում են ներդրումային ընկերության կազմակերպական-իրավական ձևը և ներդրումային ընկերության վերաբերյալ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (այսուհետ՝ ՀՀՀՄ) 1-ով սահմանված այլ տեղեկատվություն: Տեղեկությունները ներկայացվում են ըստ հետևյալ բաժինների՝

1) ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

ա. ներդրումային ընկերության հիմնական գործունեությունը.

ԷՔՈՒԻՁԻ ԷՅ ԷՄ ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հիմնական գործունեությունը ներդրումային ծառայությունների մատուցումն է՝

ա) հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հարկորումը,

բ) իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը.

բ. գործարար միջավայրը.

Ընկերության գործարար միջավայրն է՝

ա) ՀՀ Կենտրոնական բանկ,

բ) ՀՀ Բանկեր,

գ) Հայաստանի և միջազգային ֆինանսական շուկաներ,

դ) ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձիք:

գ. եթե ներդրումային ընկերությունը խմբի անդամ է, ապա խմբի իրավական կառուցվածքը:

«Էջովի էյ Էմ» ՓԲԸ ներդրումային ընկերությունը հանդիսանում է Էջովի Գրուպի խմբի(այսուհետ՝ Խումբ) անդամ և չունի ներկայացուցչություններ և մասնաճյուղեր:

2) ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

«Էջովի էյ Էմ» ՓԲԸ-ը գրանցվել և լիցենզավորվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 10.07.2012թ.-ին, իսկ վերանվանակարգումները կատարվել են 22.09.2015թ., 23.11.2018թ., 10.12.2018թ. և 14.08.2019թ.-ին: Ընկերության լիցենզիայի համարն է թիվ 0011: Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան 0010, Բաղրամյան 5:

ա. խորհրդի կառուցվածքը, կազմը.

Ընկերությունը խորհուրդ չունի: Կառավարման մարմիններն են՝

• բաժնետերերի ընդհանուր ժողովը

• տնօրենը:

բ. տնօրենության կառուցվածքը, կազմը.

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը: Ընկերության տնօրենի իրավասությանն են պատկանում գործունեության ղեկավարման հարցերը, որոնք Կանոնադրությամբ վերապահված չեն ընդհանուր ժողովին:

գ. սեփականության կառուցվածքը, բաժնետերերի/մասնակիցների քանակը հաշվերու ժամանակաշրջանի վերջում.

«Էջովի էյ Էմ» ՓԲԸ Ընկերության սեփականության կառուցվածքը՝ փակ բաժնետիրական ընկերություն:

31.12.2019թ. դրությամբ Ընկերության բաժնետերերի քանակը 1 է՝ իրավաբանական անձ Էջովի Քեփիթըլ Յու Քեյ Լիմիթեդ Ընկերությունը, գրանցված Մեծ Բրիտանիայում:

դ. նշանակալից մասնակիցների անունները/անվանումները.

Ընկերության միակ բաժնետեր է հանդիսանում՝ Էջովի Քեփիթըլ Յու Քեյ Լիմիթեդ ընկերությունը, որին սեփականության իրավունքով պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%:

ե. ղեկավարների վարձատրության քաղաքականությունը.

Ղեկավարների աշխատանքի վարձատրության պայմանները սահմանվում են աշխատանքային պայմանագրերով:

զ. արգաքին ատղիքին վճարները:

«Էջովի էյ Էմ» ՓԲ Ընկերության 2018թ. Ֆինանսական տարվա արդիւղը իրականացվել է «Գրանթ Թորնթոն» ՓԲ Ընկերության կողմից: Արտաքին ատղիքի ծառայությունների համար վճարը տրվել է նշված Ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն:

5. «Մանթաթարգմանություն 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը» ծանոթագրությունում ներդրումային ընկերությունը բացահայտում է ներդրումային ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ անվճար հետևյալ հոդվածների վերաբերյալ.

1) Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը.

«Էջուիթի Էյ ԷՏ» ՓԲԸ իր հաշվապահական հաշվառումը վարել է և ֆինանսական հաշվետվությունները կազմել է ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքին, ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի, ներդրումային ընկերությունների հաշվային պլանի կիրառման հրահանգի, Ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականության, ինչպես նաև գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերի համաձայն:

2) համախմբման սկզբունքները (համախմբման դեպքում),

3) եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը.

Ընկերության կողմից գործարքների կատարման ընթացքում ստացված կամ ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Ընկերությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվգրման եղանակով (օրական կտրվածքով)՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից, հաստցման իրական արժեքով, հաշվեկշիռ ամսաթվի դրությամբ, գործարքի ավարտման աստիճանի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընկերությունը ոչ տոկոսային ծախսերը չափում, ճանաչում և գրանցում է հաշվգրման սկզբունքով՝ հիմք ընդունելով համապատասխան պայմանագիրը կամ նախորդ ժամանակաշրջանի վճարումները, ընդ որում, ոչ տոկոսային ծախսերի գծով հաշվգրումները կատարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

4) արտարժույթային գործառնությունների հաշվառումը.

Ընկերությունը հաշվապահական հաշվառումը վարում, ֆինանսական հաշվետվությունները կազմում և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արժույթով, որն էլ հանդիսանում է հաշվետվական արժույթ: Արտարժույթով արտահայտված գործառնությունները Ընկերությունը գրանցում է հաշվետվական արժույթով, կիրառելով գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի նկատմամբ սահմանված փոխարժեքը: Սկզբնական ճանաչումից հետո հոդվածները վերագանահատվում են տվյալ օրվա փակման փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային դրական կամ բացասական տարբերությունները ճանաչվում են որպես ժամանակաշրջանի եկամուտ և ծախս:

5) հարկեր (ընթացիկ և հետաձգված),

Ընկերությունը հարկերի (չափափառիկ, ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի,) վճարների գծով հաշվառումը վարում է ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան:

Շահութափառիկ գծով ծախսը (եկամուտը) բաղկացած է ընթացիկ հարկի գծով ծախսից և հետաձգված հարկի գծով ծախսից (եկամուտից):

Ընթացիկ շահութափառիկ գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա համար հաշվեգրում է շահութափառիկ պարտավորությունը շահույթի նկատմամբ, և հաշվետու տարվա վերջին այն ճշգրտվում է և հաշվանցվում շահութափառիկ գծով կատարված կանխավճարների հետ:

Հետաձգված հարկերը առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշիռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, թե՛ անկախ են այդպիսից, մասնատվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որը ճանաչում էր հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Շահութափառիկ գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են:

6) Ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը,

Ընկերությունը ֆինանսական գործիքները՝ ակտիվները և պարտավորությունները, հաշվեկշիռում ճանաչում է միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործարքի պայմանագրային կողմ:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների.

•ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

դասակարգումը կիրառվում է այն դեպքում, երբ Ընկերության բիզնես մոդելն առաջատար է պահել ակտիվը պայմանագրային հոսքերը հավաքագրելու նպատակով, և պայմանագրային հոսքերը համարվում են բացառապես մայր գումար և չմարված մայր գումարի նկատմամբ հաշվառվող տոկոսներ.

-բյուջետային արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

- ֆինանսական ակտիվներ, որոնց գծով բավարարված են ամորտիզացված արժեքով հաշվառման պահանջները, սակայն Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին դասակարգում է դրանք իրական արժեքով հաշվառվող
- մնացած ֆինանսական ակտիվներ, որոնք չեն բավարարում ամորտիզացված արժեքով հաշվառվող դասակարգման պահանջներին, դրանք են՝ աճանցյալ, բաժնային, պարտքային գործիքներ և հեջավորման համար նախատեսված ֆինանսական ակտիվներ:

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռք բերման պահին՝ Ընկերության կողմից սահմանված գնահատումների հիման վրա, ինչպես նաև ստացնողները է ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներով:

7) դրամական միջոցներ և դրանց համարժեքները (բացահայտում են այն քաղաքականությունը, որը կիրառվում է դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը որոշելիս),

Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են բանկերում հաշիվների մնացորդներից և ժամկետային ավանդներից, որոնց ծնվանքային ակտիվները կատարվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատշաճ կերպով կազմված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

8) շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,

Ընկերությունը նման դրամավորմամբ արժեթղթերով գործարքներ չի իրականացրել, իսկ այդպիսի արժեթղթեր տիրապետելու դեպքում, կառուցվողովի ստորև ներկայացված սկզբունքներով: Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը իրավունք ունի իր հայեցողությամբ դասակարգել ակտիվը որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող (առանց հետագա վերադասակարգման իրավունքի) միայն այն դեպքում, երբ նման դասակարգումը թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել չափման և ճանաչման համար կիրառվող մտոեցումների անհետևորականությունը (հաշվառման անհամապատասխանությունը):

9) այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,

Ընկերությունը նման դրամավորմամբ արժեթղթերով գործարքներ չի իրականացրել, իսկ այդպիսի արժեթղթեր տիրապետելու դեպքում, կառուցվողովի ստորև ներկայացված սկզբունքներով:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու և թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները նախատեսում են որոշակի ամսաթվերին դրամական միջոցների հոսքերի առաջացում, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ

10) ռեպո համաձայնագրերով գործառնություններ,

Ռեպո համաձայնագրերի հիման վրա գործարքներ կնքելու դեպքում, համաձայնագրերով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները Ընկերությունը հաշվառում է որպես տրամադրված փոխառություններ, իսկ դրանց գծով ստացվող տոկոսները հաշվգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ: Իսկ ռեպո համաձայնագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ, և դրանց գծով վճարվող տոկոսները հաշվգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս:

11) աճանցյալ ֆինանսական գործիքներ,

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ՝ 31.12.19թ. Ընկերությունը չունի բաց դիրքեր:

12) փոխառություններ՝ բանկերին, այլ ֆինանսական կազմակերպություններին, հաճախորդներին,

13) փոխառությունների ու դերհորդրական պարզերի արժեզրկման գծով կորուստների որոշման և անհուսալի փոխառությունների ու դերհորդրական պարզերի դուրսգրման հիմունքը,

14) գրուկտների հաշվեզրման դատարեցումը,

Գործող պայմանագրերի շրջանակներում տոկոսների հաշվեզրումը դադարում է, երբ կա բավարար հիմք կարծելու, որ դրանք չեն հաշվեզրվի:

15) ամորֆիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հաշվառումը,

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին.

- այն պահվում է այնպիսի ռիզիկո մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքերը ստանալու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները նախատեսում են որոշակի ամսաթվերին դրամական միջոցների հոսքերի առաջացում, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքով հաշվառվածության էությունը կայանում է նրանում, որ այդ գործիքների սկզբնական արժեքի և ամբողջական մարման գումարի տարբերությունը հանդիսանում է իր տեսանական բովանդակությամբ տոկոս՝ այսինքն հատուցում ժամանակի և պարտքային ռիսկի դիմաց:

16) հեջի հաշվապահական հաշվառումը,

17) ասոցիացված և դուստր կազմակերպություններում ներդրումների հաշվառումը,

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի ասոցիացված և դուստր կազմակերպություններում ներդրումներ:

18) հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ,

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, Ընկերությունը սկզբնապես չափում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ ՀՀ դրամով, իսկ երբ հիմնական միջոցի իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն կտարբերվի՝ ապա այն կհաշվառվի վերագնահատված արժեքով: Հիմնական միջոցի օգտակար ծառայության ընթացքում դրանց մաշվածության գումարը պարբերաբար բաշխվում է և ճանաչվում է որպես ծախս: Ամորտիզացիոն մասնատումները կատարվում է ելնելով ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազագույն ժամկետներից:

Հիմնական միջոցների (համակարգչային տեխնիկայի) միավորի օգտակար ծառայությունը վերանայվել է մասնագիտացված անկախ գնահատող Ընկերության կողմից և 30.06.14թ. դրությամբ ներկայացվել են իրական արժեքները և օգտակար ծառայությունների նոր ժամկետները:

Ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը հաշվառում է ձեռք բերման արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են հաշվեկշռային արժեքով՝ սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ:

19) հաճախորդների միջոցներ,

Էբոֆիբի Էլ Էմ Ընկերության հաճախորդներին սպասարկելու համար իրականացվել են բոլոր անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները նոր անցանց MT4 հարթակի ծրագրային կարգավորումները՝ համաձայն գործող սպասարկման պայմանների: Ընկերությունը տրամադրում է իրացվելիություն ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ ինստիտուցիոնալ հաճախորդներին:

20) ներդրումային ընկերությունների կողմից թողարկված պարտքային արժեթղթեր,

Ընկերությունը 2020 թվականի հունիսի 30-ի դրությամբ չի թողարկել պարտքային արժեթղթեր:

21) գարբերակումն այն գործառնությունների և իրադարձությունների, որոնք հանգեցնում են հաշվեկշռում ակտիվների և պարտավորությունների ճանաչմանը, այն գործառնություններից և իրադարձություններից, որոնք առաջացնում են միայն պայմանական դեպքեր և պայմանավորվածություններ,

Ընկերությունը հաշվեկշռում ակտիվների և պարտավորությունների ճանաչմանը հանգեցնող գործառնությունների տարբերակումը պայմանական դեպքեր և պայմանավորվածություններ առաջացնող գործառնությունները իրականացնում է հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների համաձայն:

22) ընդհանուր գործունեության ռիսկերի դիմաց կարգավորվող հարկացումների որոշման և դրանց հաշվապահական ձևակերպման հիմունքը,

23) կապիտալ և էմիսիոն եկամուտ,

Ընկերության բաժնեմասերի անվանական արժեքների հանրագումարը դասակարգվում է որպես կանոնադրական կապիտալ: Եթե նոր բաժնեմասերի վաճառքի արդյունքում առաջված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնեմասերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար կամ Էմիսիոն եկամուտ (հավասակ դեպքում՝ որպես գեղջ):

24) փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը,

25) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը,

Ընկերության ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և գուտ գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ կա իրավաբանորեն անբազում իրավունք հաշվանցելու ճանաչված գումարները և կա մտադրություն վերջնահաշվարկն իրականացնելու գուտ հիմքով, կամ իրացնել ակտիվն ու մարել պարտավորությունը միաժամանակ:

26) ֆինանսական ակտիվների վերադասակարգումները,

Ակտիվների վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

27) փեդեկավորություն սեզմենտների վերաբերյալ:

6. Ծանոթագրություն 2-ում բացահայտվում է կազմված ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և ներդրումային ընկերության իրավասու մարմնի կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

«Էբոֆիբի Էլ Էմ» ՓԲԸ-ն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են միջազգային ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ստանդարտների ներքո և Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: